

ՀԱՅԲ

Հ Ա Ն Դ Է Ս

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAİK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West, 23rd St., New York, N. Y. Vol. VI, 1896.

ԲՈՎՆԵՐԵԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական ընթացք.— Անգլիա՞ է մեզ Բարեկամ Թէ Ռուսիա.— Նամակ Արաբկերէն.— Արաբկերի ատերում.— Նակակ խարբերէն.— Նամակը Կ.Պոլսէ.— Ուրծայի կոտորածն.— Ամերիկայի լքեալ Նաւային կռիւն ընդդէմ Թուրքիոյ.— Հայերէն Լեզուն և Համդէս Ամուսնայ.— Ամերիկայի Հայերուն.— Ամերիկեան իրաւունք ի Թուրքիա.— Զէյթունի մասին հետազոտութիւն.— Այլևայլք:

ԽՄԲԵՐԵԿԱՆ ՆՇՄԵՐԻ

Մեր ներկայ թուոյ առաջնորդող յօդուածին («Անգլիա՞ է մեզ բարեկամ Թէ Ռուսիա») կը հրաւիրեմք ընթերցողաց մասնաւոր ուշադրութիւնն: Ռուսիոյ և Ֆռանսայի համակրութիւնն չափիլ պէտք է լինի մեր ջանք: Հայկական դատն մեծ փաստ կրեց Անգլիոյ ձեռքի մէջ: Երկար ատեն Ֆռանսացիք պնդեցին թէ խժոժութեանց և կոտորածոց տեղեկագրութիւնք բրիտանական չափեր հոգալու համար ըստեղծուած են: Նաև Ռուսիա որ այնքան արդար առիթներ ունեցած է Անգլիոյ դէմ ցաւելու, բնական էր որ բրիտանական անցեալ անհաւատարմութեանց և ա.

նիրաւութեանց խայտառակ արդիւնքին դէմ գայն պաշտպանելու փոյթ չանէր: Անգլիոյ ոչ միայն կառավարութիւնն այլ և ժողովուրդն մեծապէս թերացաւ իւր պարտաւորութենէն հանդէպ Հայաստանի: Ինչ գումար հանգանակեցին հարուստ անգլիացիք տարիէ մ'ի վեր. իբր 20,000 ոսկի: Նայելով 50 միլիոն լիրայի կորուստին զոր Հայք կրեցին, և 500,000 տառապելոց զարհուրելի խեղճութեանն կը կարծէինք թէ առ նուազն 200 հազար ոսկի պիտի հանգանակուէր յԱնգլիա:

Զէյթունի մասին եւրոպական հեռագրութիւնք զարմանալի հանգամանք մի են ունեցած սկիզբէն ի վեր: Երբ թուրք բանակն չարաչար նահանջեց մեր քաջերու հարուածներու առջեւէն, և հազարաւոր վիրաւորեցող ի Մարաշ քաղաքին ծանուցուեցաւ, «Թուրքերն կոտորուած են» առին, փոխանակ պարզապէս ասելու թէ թուրքերն պարտութիւն կրած են, կամ թէ Հայք յաղթութիւն տարած են: Վերջերս ալ կը ծանուցանեն թէ Զէյթուն «անձնատուր» եղած է: Դէպքերու ընթացքին քիչ տեղեակ մէկն պիտի հետեւցնէր թէ Հայք այլ ևս դիմադրելու անկարող լինելով՝ անձնատուր են եղեր, մինչ ճշմարտութիւնն այն է թէ թուրքերն յաղթուած և հաշտութեան հնար են խնդրած, և եւ.

րոպական տէրութեանց միջնորդութեամբ Զէյթունցիք բարեհաճեր են դադարիլ զԹուրքն հարուածելէ՝ այս ինչ պայմաններով, որք Թրքի կողմէն ընդունուած են: Ուղիղ չէ «անձնատուութիւն» կոչել զայսպիսի հաշտութիւն:

Այս Հաշտութեան վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնք դեռ հաստատման կարօտ են:

* *

Արաբներէն յղուած նամակն, զոր ներկայ թուով կը հրատարակեմք, քաղաքին ալէտներն պարզ բայց բնական և ահաւոր կերպով կը նկարագրէ որպէս քիչ նամակագիրներ կարեն:

Հասած են մեզ ուղղակի և անուղղակի ճանբաներով 40 կամ 50 նամակներ ևս Թուրքիոյ ներքին գաւառներէն, բայց, ինչպէս յայտնի է, անհնար է զայնս ՀԱՅՔԻ մէջ զետեղել: Եթէ զամենն հրատարակել փորձէինք, ՀԱՅՔԻ հինգ հարիւր էջերն կը լենային:

Կարծեմք թէ այդ նամակներէն ընտրելագոյններն անգլիերէնի թարգմանելով թերթերուն մէջ հրատարակել շատ աւելի օգտակար կը լինի, և մեք զայդ անել արդէն սկսած եմք:

Ուրեմն կը խնդրեմք որ մեր բարեկամք չցաւին թէ ինչու իրենց ձեռքով մեզ յղուած թղթակցութիւններն չեն երևնար անվրէպ ՀԱՅՔԻ մէջ:

* *

ԳԵՐԵՐՈՐ ԱՁԳ

ՀԱՅՔԻ Ամերիկայի բաժանորդաց կը փափաքեմք ծանուցանել թէ

ՆԱԽ. մինչև այսօր, Փետր. 27, միայն 116 տարեկան բաժանորդագիրն ստացած եմք 1896 թուականին հաշուոյն:

ԵՐԿՐՈՐԴ. ՀԱՅՔԻ յաջորդ թիւն մէկ ամիսէն պիտի հրատարակեմք. յուսալով թէ այդ միջոցին բաժանորդ կը գրուին բաւական թուով, այնպէս որ կարող լինին 15 օրն անգամ մի հրատարակել զայս թերթ:

ԵՐՐՈՐԴ. մեր Ամերիկայի Հայ Հայրերենակիցներ իրենց ցաւերէն և վշտերէն չուարած կամ թմրած պէտք է լինին եթէ կը կարծեն թէ ազգն հացով միայն

կրնայ ապրիլ, առանց փրկութեան բարոյական միջոցներուն, որոց մէջ կարեւորագոյն տեղ մ'ունի թերթն, լրագիրն:

Արթնցէ՛ք, հայրենակիցներ և տուէք ՀԱՅՔԻ 4 հարիւր բաժանորդ որ հրատարակուի ամիսն երկու անգամ, կամ, աւելի լաւ, տուէք 5 հարիւր բաժանորդ, և կը հրատարակուի շաբաթն անգամ մի: ՄԵՐ ԲՈՂՈՐ ԲՍԺՆՆՈՐԴՆԵՐՈՒՆ

«Հայքի» հրատարակութիւնն այս տարի պիտի շարունակուի, բաժանորդաց թիւն բաւական լինի թէ ոչ:

Հայք պիտի հրատարակուի աւելի կամ նուազ յաճախ ըստ բաժանորդաց թուոյն:

Մեր եւրոպական երկրաց և Եգիպտոսի բաժանորդներու ամենամեծ մասն դեռ նորոգած չէ բաժանորդագրութիւնն: Իրաւ որ չեմք հասկանար թէ այդ յարգելի տեսարց այսչափ կամաց շարժելուն պատճառն ինչ է. դրամ յղելու միջոցներ չատ կան: Կը խնդրենք փութան անմիջապէս յղել որոնք որ դեռ յղած չլինին մինչև Հայքի այս թիւին իրենց ժամանելն:

Բաժանորդագիրն ժամանակին՝ կանխիկ վճարելն բարեկրթութեան և բանիմացութեան նշաններէն մին է:

* *

ՄՇԱԿԻ Խմբագրութիւնն նոր, աւարտող առթիւ յօդուած մի նուիրած է դատապարտելու մեր ազգի մէջ տարածուած այն անազնիւ սովորոյթն որով շատեր ապառիկ կը թողուն թերթի բաժանորդագրութիւնն: Նա կը ցուցնէ թէ այս յոռի ընթացքի քաջալերիչ կը լինին խմբագիրք ոմանք որք թերթ կը յղեն բազմաթիւ անհասներու որք բաժանորդ գրուած չեն կամ գրուած են ու չեն վճարեր:

Մշակի զիտուածն յոյժ ճշմարիտ է:

Մեք Հայքի յղումն այս անգամէն ըսկսեալ դադրեցուցինք ամեն անոնց որք վճարած չեն բաժնեգիրն 1896 թուականին համար:

Եթէ թերթ մի կարդալ կ'արժէ, վճարել ալ կ'արժէ:

Կը խնդրեմք որ մընի օրաընթիւ կամ մանտա տը փութի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան: Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ:

ԱՆԳԼԻՆ՝ Է ՄԵԶ ԲԱՐԵԿԼՄ

Թ է

ՌՈՒՍԻԱ

Ա

1878ի Կիպրեան դաշնագրի միտքն այն էր թէ Մեծն Բրիտանիա պիտի պաշտպանէր զԹուրքն ընդդէմ Ռուսիոյ և զՀայն ընդդէմ Թրքին։ Պահպանողական դաշլի-նքն կը հասկնէր Եւրոպիոյ թէ ինքն Դը-րոսն քրիստոնեայ հպատակաց բարեոք վար-չութեան մասին գործօն դեր մի կատա-րելու դաշնադիր եղած էր Թուրքիոյ հետ, այնպէս որ շնորհիւ անգլիական նեցուկին կեցող Թուրք իշխանութիւնն այլ ևս չպի-տի կարենար անէծք և չարիք լինիլ իւր քրիստոնեայ հպատակաց։

Վերջին 18 տարիներու ընթացքն ցոյց տուաւ թէ Անգլիա բարեկարգութեան վե-րաբերեալ յօդուածն դրած էր Կիպրեան դաշնագրոյն մէջ լոկ ի պատրուակել զիւր պժգալի նախանձն ու չահախնդրութիւ-նքն։ Սոյզպէրի իրեն յատուկ շնականու-թեամբ յայտարարեց անցեալ օր թէ Անգ-լիա ու և իցէ՛ դաշնագրով պարտաւորու-թիւն յանձն առած չէ զԹուրքն զինու-զօրութեամբ ստիպել զիւր դաշնագրա-կան խոստումներն կատարելու։ Կ'երեւի թէ նախարարապետն ինքն ալ կասկածե-լով թէ գուցէ այդ խաբէական փառս չի կրնար խաբել շատ, յառաջ կ'երթայ երկ-րորդ՝ և ոչ նուազ խայտառակ՝ ջատագո-վութիւն մ'ի մէջ բերելու, այսինքն թէ գինուորական գրաւմամբ միայն կարելի էր զՀայաստան պաշտպանել կոտորածոց գէմ, բայց Անգլիա չէ կարող ծովէն հե-ռու գանուռող այդպիսի լեռնային երկիր մի գրաւել։ Թող որ Անգլիա կարող է Կիլի-կիոյ և Սիւրիոյ եզերքներէն ներս մխիլ ի հայաբնակ գաւառներն, բռնենք զԼորտն իւր ասից մէջ և հարցնենք թէ ուրեմն ինչ իրաւամբ Մեծն Բրիտանիա 1878ին Ռուսիոյ իշխանութենէն կորզելով՝ Թրքին վերադարձուց այն հայկական գաւառներն ուր իւր բազուկ չէր կրնար հասնիլ ի պա-հանջել հարկին։

Անգլիա այդ ընթացքով անիրաւեց ե'ւ Ռուսիոյ ե'ւ Հայաստանի։ Հայաստանի

անիրաւեց այնու զի Թրքաց զԺողովրդեր յարաճուն արհաւիրաց ենթարկեց զայն. և Ռուսիոյ անիրաւեց չթողլով որ բազմա-ծախ պատերազմին թանկագին յաղթու-թեան պտուղն քաղէ։

Բ

Դառնամք այժմ Ռուսիոյ։ Բազդատե-լով Ռուսիոյ քաղաքականութիւնն Բրիտա-կանին հետ, կը գտնեմք զառաջինն մեզ աւելի նպաստաւոր։ Ռուսիա ներկայ դա-րուս սկիզբէն ի վեր փափաքած է որ Թուրքիա խաղաղ մնայ, բայց ոչ թէ քը-րիստոնեայ հպատակներն զոհ տալու պայ-մանաւ։ Մինչև 1830, Մոսկովն փորձեց զԹուրքիա բաշխելով խաղաղ պահել իւր սահմանագլուխներ. այն թուականէն յե-տոյ եղանակաւորելով իւր տեսութիւն՝ ու-զած է մանաւանդ անհանդարտ և հարս-տահարեալ քրիստոնեայ գաւառներն թըր-քի լուծէն ազատուած և ինքնօրէն փոքր պետութեանց վերածուած տեսնել։ Այդ կերպով կազմուած են Յունաստան, Ռու-մանիա, Սերպիա, Պուլկարիա և Մոնթէ-նէկրօ։ Հարկաւ Ռուսիա կը պատէ որ իւր աջակցութեամբ ազատուած նահանգներ իրեն քաղաքական ազդեցութեան հպատա-կին, և յայդմբ բնաւ մեղադրելի չէ նա։ Իսկ Անգլիա՞ ինչ ուզած է։ Նա միշտ ջա-նացած է որ Թուրքիա անվթար մնայ, ամ-բողջութիւնն պահէ, որպէս զի անգլիական ազդեցութիւն և վաճառք ազատ առպա-րէզ գտնեն հոն։ Բայց այդ պարագայի սակ քրիստոնեայ հպատակք կը հարստա-հարուին, կը ջարդուին, կը ջնջուին եղեր —ինչ փոյթն է Անգլիոյ։ Նա պատրաստ է իւր սակեցէր շահերուն կեր տալ քրիս-տոնեայ ժողովրդի մի ստացուածքն, պա-տիւն, և կեղեցին ու գոյութիւնն։

Վերջին կոտորածոց միջոցին Ռուսիա գարմանալի դիրք մի բռնեց։ Ինքն միայն կարող էր մէկ հրամանաւ արգելուլ ջար-դերն, և չարգիլեց։ Ինչո՞ւ չարգիլեց։ Մի-թէ կ'ուզէ՞ր որ ջարդուէինք։ Ո՛չ. բայց այն աստիճան ահագին ոխ ունի Անգլիոյ դէմ որ ուզեց զայն մինակ թողուլ և ցոյց տալ աշխարհի թէ ինչ զարհուրելի և ա-ղետաբեր է նորա քաղաքականութիւնն Հայաստանի մասին։ Չեմք արդարացու-ներ Ռուսիոյ անսարքերութիւնն, կը բա-ցատրեմք միայն։ Կ'ուզեմք ամենայն յըս-տակութեամբ պարզել սա իրողութիւնն

Թէ Հայոց դատն կորոյս զհամակրութիւն Ռուսիոյ, ինչպէս նաև Գերմանիոյ և Ֆրանսայի, անոր համար որ Անգլիա, իրենց ատելի՛ն Անգլիա, զայդ դատ կեղծաւորապէս իւր վերայ էր առած: Ռուսիա չուզեց որ իւր ուժով և ազդեցութեամբ խնդիրն լուծուի, և Անգլիա իւրացունէ պատիւն:

Հաւանական է թէ Ռուսիա մենէ ալ քիչ մի պաղած էր տեսնելով թէ բարի բան կ'ականկալէինք անգլիայէն՝ դիմումներ անելով Անգլիոյ և հայ հայրենասէր գործիչներու կեդրոն անելով զԼոնտոն:

Եթէ Ռուսիա կարծեց թէ Հայք այնպէս արին այն յուսով թէ Անգլիոյ շնորհիւ Հայաստան առանձին պետութիւն մի կազմուի, սխալեցաւ: Հայոց յոյսն Անգլիայէն միայն այնչափ էր թէ քանի որ նա էր Թուրքի պիղծ իշխանութեան ներքեւ զիրենք պահողն, սրբազան պարտք պիտի համարէր հայկական բարեկարգութիւններ գէթ չափով մի գործադրել տալ Հայաստանում: Հայոց այս սխալն աւելի ազնիւ էր քան տխմար, և ամենեւին հակառուս հանգամանք չունէր:

Թուրքիոյ Հայք Ռուսիոյ բարի ազդեցութիւնն չատ վայելած են և միշտ կը հառաչէին բոլոր այս վերջին 50 տարիներն թէ ե՛րբ պիտի գայ «Հօրեղբայրն»: Թրքահայք սովոր են «Հօրեղբայր» կոչել Ռուսաց ջարերն: Ամեն անգամ որ Ռուսն ծեծ է կերուցեր Թրքաց, սոցա մոլեռանդութիւնն մեղմացած է և Հայոց հետ նուազ գազանութեամբ վարուած են: 1878ի պատերազմէն յետոյ ալ Հայք զգացին թէ Թրքաց որքան բարոյացուցիչ ազդեցութիւն գործած էր Ռուսական մըտրակն:

Կովկասի Հայք ալ միշտ և հանապազ հաւատարիմ հպատակ են եղած Ռուսիոյ՝ յորմէ յետէ նսրա հովանւոյն ներքեւ մըտած են: Ռուսահայոց մէջ տէրութեան դէմ ապստամբելու ամենադոյզն նշան մի իսկ չէ երեւցած:

Կրնայ լինիլ թէ փափաք զգացուած լինի որ Թրքահայաստանն Ռուսահայաստանի հետ կցուելով՝ ամբողջ Հայաստանն ունենայ առանձին վարչութիւն, բայց միշտ Ռուսիոյ իշխանութեան ներքոյ, իրեւ Ռուսական պետութեան մէկ նահանգըն: Եւ այս փափաք, որ մեր ալ անձնա-

կան փափաքն եղած է և է այսօր իսկ, կատարելապէս համաձայն է Ռուսիոյ շահերուն և ձգտմանց, և բոլորովին տարբեր է անգլիական այն նախանձոտ երազէն թէ կրնար Հայաստան Ռուսիոյ մեծանալուն դէմ իբրեւ անկախ թումբ կազմուիլ:

Մեք անկեղծօրէն կը յուսամք թէ Ռուսիոյ կառավարութեան և Հայոց միջև այսպիսի հասկացողութիւնն մի գոյացնել հնար է, և պէտք է առ այդ աշխատիլ:

Նախ հարկ է որ մեր գործիչներ քաջուն լոնտոնէն, և որ Անկլո-Արմիններն ընկերութենէ հրաժարին, եթէ կան տակաւին, հայ անդամներն: Պէտք է զԲարիդ տնել մեր դիւանագիտական կեդրոնըն. անդ կազմաւորել մի այնպիսի կեդրոնական զուտ Հայ Յանձնախումբ այնպիսի ազգայիններէ որք արդէն վիժեալ քաղաքականութեան հետ կապ ունեցած չըլինին և կարենան համակիր ունկնդրութեան արժանանալ Ֆրանսայի, Գերմանիոյ և մանաւանդ Ռուսիոյ դահլիճներուն առջեւ:

Պէտք է այդպիսի յանձնախումբ մի կազմուի իսկոյն, և յատուկ հայ պատգամաւորութիւն մի դիմէ Ռուսիոյ վեհակայսեր:

ՆԱՄԱԿ ԱՐԱԲԿԵՐԷՆ

ԵՐԵՎԱՆԻ ԵՒԵՐՈՒՄՆ

Հոկտ. 25 Չորեքշաբթի օր ժամը 9ին քաղաքը պաշարուեցաւ հազարաւոր Բիւրդերու կողմէ. որոնք, ինչպէս իրենք իսկ կը վկայէին, Արաբկերի շրջակայ հեռաւոր ու մերձաւոր գաւառներէն մասնաւոր հրաւիրագրերով եկած էին քաղաքն կործանելու: Ասոնց մէջ կը տեսնուէին Տէրսիմցի, Աղճատաղցի, Մալաթիացի, Արզաւանցի, Աթմացի, Տիվրիկցի, մինչև իսկ Ղօշկիրիցի Բիւրդեր, այս վերջինը Շապին Գարահիսարի մօտ գաւառակ մ'է: Ասոնցմէ զատ կային նաև Արաբկերի շրջակայ գիւղերէն Թիւրքեր: Ասոնք ամենը իրենց զրատները ու մարդիկը հաստատեցին քաղաքին շրջակայ բլուրներուն և տափարակներուն վրայ ու իրենք քանի մը

կեսերէ յարձակեցան քաղաքին վրայ: Հայերը թէն քանի մ'օրէ ի վեր ահ ու սարսափի մէջ էին ու գիտէին թէ քաղաքին գլխուն մեծ աղէտ մը կը սարքուի, այդ պատճառաւ ալ երկու երեք օրէ ի վեր չուկայ յաճախելէ դադրած ու իրենց կըրպակները մասամբ դատարկացուցած էին, բայց վտանգին առաջն առնելու անկարող էին: Փախչելու դիւրութիւն ալ չկար: Դէպքէն մի քանի օր առաջ քաղաքը շրջակայ գիւղերուն և գաւառներուն հետ հաղորդակցութեան դնող բոլոր ճամբաներն բռնուած էին պահակ զինուորներու կողմանէ, այնպէս որ ոչ միայն փախստականները, այլ և կարեւոր գործի համար քաղաքէն մեկնողներն ետ դառնալու կը ստիպուէին:

Քրդերը տեղացի քաղաքաբնակ թրքերու առաջնորդութեամբ երբ յարձակեցան Հայոց թաղերու վրայ, այնպիսի սարսափ մը ձգեցին, որ Հայերը թողին իրենց բնակարանները, ստացուածքը, կարասին ու փախան ուրիշ թաղեր: Յարձակողները կը կողոպտէին տուները, աւարի տալով անոնց բոլոր պարունակութիւնը, զարդերը, զգեստեղէն, անկողին, պղնձեղէն, նպարեղէն, անասուններ ու վերջապէս ամեն ինչ, զորս չալկելով տարին յանձնեցին քաղաքէն դուրս իրենց մարդոց ուր չեղձաչեղձ կը դիզէին ու կը կուտակէին այդ բազմաթիւ հարստութիւնները: Այսպէս ամեն կողմէ յարձակող անհուն բազմութիւնը հետզհետէ մըջիւնի պէս քարածուեցաւ Արաբկերի լայնատարած քաղաքին ամեն կողմերը, ձորերու, խիտ ծառատաններու մէջ և ուրիշ հեռաւոր ու մերձաւոր վայրեր գտնուած թաղերուն, արուարձաններուն ու առանձին բնակարանաց վրայ, մտաւ ամեն ծակ ու ծուկ և աւարի տուաւ, երկու օրուան մէջ կողոպտեց դատարկացուց ոչ միայն Հայոց 2,000 տուները, այլ մեծ ու փոքր շուկաները, եկեղեցիները ու մինչև իսկ վարժարանները ու առաջնորդարանը: Տարաբաղդ հայ ժողովուրդը որ խուժանին առջեւէն միշտ խոյս կուտար, իւր տունը ու ամբողջ հարստութիւնը անոնց յանձնելով իր օձիկը չէր կրնար ազատել, վաւրն գիւղ ամենուրեք կը կողոպտուէր, կը թալլուէր ու կը մերկացուէր իր քոսիէն, իր վրայ ունեցած ոչ միայն արժէքաւոր նիւթերէն, այլ մինչև իսկ իր նոր զգեստ-

ներէն: Աւարառուները այնքան մոլեգնեալ էին ընչաքաղցութեամբ և ագահութեամբ որ 2,000 տուներու, երեք եկեղեցիներու և հարուստ մայր եկեղեցիին աւարներով չգոհանալով, հետամուտ էին միշտ ձեռք ձգել կիներն ու օրիորդներն և անոնց թանկագին զարդերը կորզել ու յափշտակել: Տեսնուեցան շատ գազաններ որ կիներու ամենածածուկ տեղերը պահուած ոսկեղէն զարդերը երևան հանեցին և ուրիշներ անոնց մետաքսեայ և դիպակեայ ներքին զգեստները կողոպտեցին, թողլով այն փափուկ ու ամօթխած արարածները Եւայեան մերկութեան մէջ:

Աւարառուները, որոց բազմութեան թիւ ու համար չկար, մէկ տունը երեք չորս և աւելի անգամներ կայցելէին կողոպտելու, վասն զի ամենէն վերջը եկողն ալ բան մը կը գտնէր տանելու. նոյնպէս ամեն կին կը կողոպտուէր մէկէ: աւելի անգամներ զանազան մարդոց ձեռքով, մինչև որ մերկ ու տկուր դառնար բոլորովին: Յաւալին այն է որ Հայոցմէ շատեր երբ զօրքերու ու ոստիկաններու ձեռքով հաւաքուելով իբր թէ պահպանելու համար կառավարութեան դուռը և անտի ուրիշ տեղեր կը տարուէին, իրենց քսակը ու կանանց ալ զարդերը ու թանկ ըզգեստները կը յափշտակուէին կառավարութեան դրան առջև իսկ:

Աւարառուներու խուժանը սակայն գոհ չեղաւ այս ահագին ու ընդհանուր աւառառութեամբ ու կողոպուտով: Անոնց երկրորդ գործը եղաւ այրել Հայոց տուները: Դիւրավառ նիւթեր ու գործիներ յանձնուած էին անոնց որոնցմով կողոպտուած ու դատարկացած տուները կրակ կը ձգէին ու կը հրդեհէին: Արաբկերի շէնքերը առ հասարակ քար ու կիր ըլլալուն համար շատ գոռաբաւ կ'այրուէին, ուստի մասնաւոր ջանքով կրակ ձգեցին տուներու ներսի կողմերը ու այրեցին բոլոր այն շէնքերը որք ընդհանուր հրդեհէ մը այրելու կը համառէին: Միանգամ բռնկուած տուները երբ այլ և այլ պատճառներով այրելէ կը դադրէին, հրձիգներն կրկին ու կրկին կը հրդեհէին: Այսպէս մի քանի օրուան մէջ Արաբկերի Հայոց երկու հազար տուները մոխիր դարձան: Տխուր աւերակաց կոյտեր կը ներկայացուեն այսօր քաղաքին Հայոց շէն

ու գեղեցիկ թաղերը, ու անոնց մէջ Տէր-
պէտէրեանց, Բօլաճեանց, Եկաւեանց ևն.
ևն. չքեղ ու բազմածախ ապարանքներն,
ինչպէս նաև 1,000է աւելի ընդարձակ բաղ-
մածախ ու խիստ գեղեցկայարմար բնա-
կարաններ: Հրդեհը լափեց տարաւ նոյն-
պէս մեծ ու փոքր շուկաներն ամբողջ ու-
րոնց կրպակներն մեծ մասամբ Հայոց ու
մասնաւորապէս Մայր եկեղեցւոյ սեփնա-
կանութիւնք էին, և անոնց հետ երեք ե-
կեղեցիներ ու վարժարաններ: Այն տու-
ները միայն կանգուն մնացին որոնք կա-
ռավարութեան դրան կամ թրքաց թա-
ղերու մօտ կը գտնուէին և կամ որոնց
մէջ թուրքեր կը բնակէին իբրեւ վարձա-
կալ որ ասոնց թիւը 250—300 է:

Սակայն աւարառութիւնն և հրդեհն
միայն բաւական չէին Արաբկերի Հայու-
թիւնն փճացունելու, սոսկալի ու երկ-
րորդ կոտորածով մը հարկ էր որ անոր
գէթ արական սեռը բնաջինջ ըլլար: Ուս-
տի աւարառուաց բազմութիւնը կողոպ-
տելու և հրդեհելու զբաղած ատեն միան-
գամայն կը զարնէր կը վիրաւորէր, և
կ'սպաննէր երբ հանդիպէր այր մարդու:
Ջարդը ոչ միայն տեղի կ'ունենար տու-
ներու մէջ, այլ փողոցներու, պարտէզնե-
րու, ձորերու և ուրիշ տեղեր, ուր փա-
խած ապաստանած էր Հայոց բազմութիւ-
նը: Որովհետեւ կարելի չեղաւ մի քանի օ-
րէն Հայերը իրենց ապաստանած տեղերէն
բոլորովին դուրս հանել ու կոտորել, հարկ
եղաւ կոտորածը շարունակել մինչև 10 օր:
Յատուկ ջանք մը կար սպաննելու այն Հա-
յեր, որք իրենց խելքով ու դրամով ա-
նուն մ'ունէին քաղաքին մէջ: Շատ ըն-
տանիքներու մէջ մէկէ աւելի այր մար-
դիկ կամ մի քանի եղբայրներ միասին
գոհուեցան: Մի քանի ազգատոհմներու
մէջ այր մարդ բնաւ չմնաց: 10 օր տեւող
այս ահռելի կոտորածը բնաջինջ արաւ հայ
ժողովրդեան գրեթէ արական սեռին մեծ
մասը: Մինչ ցարդ գոհերու համարուած
թիւն է 2,300: Յականէ յանուանէ կը յի-
շուին Պալթեան Տ. Ներսէս, Շամբեան
երկու եղբայրներն Տ. Միքայիլ և Տ. Գե-
ղամ, Տ. Գուրգէն և Գրիգոր վարդապետ
Աբրահամեան, իսկ աշխարհականներէն
Կարապետ Տ. Միքայէլեան, Մարտիրոս
Մալմեան, Մ. Գրիգոր Չուրէքեան, Թէվէ-
քէլեան Պօղոս, Տամկաճեան երկու եղ-
բայրներ. բողոքականներէն Պատ. Սիւրակա-

նեան, Հեճինեան Կարապետ և Առաքել
Հայր ու որդի, Տաթթար Պօղոս և որդին,
Եկաւեան Պաշիկ, Չուրնաճեան Արրահամ
և եղբայրը:

Այս կոտորածը յաճախ քսամեցուցիչ
խժդժութեամբ կատարուած է: 50ի չափ
կիներ ու մանուկներ ինկած էին չարա-
գործներու սուրին ներքեւ ի շարս այր
մարդոց: Վերը յիշուած քանի մը երեւե-
լի ազգայինները, հարցումի համար կա-
ռավարութեան դուռը երթալու հրաւիր-
ուելով հոն սպաննուած են: Նալպանտ
Ղազարի հինգ եղբայրներ իրարու կապ-
ուելէ ետեւ գնդակահար եղած էին: Ար-
սէնեան անուն անձ մի մորթուած է իւր
եղբօր դիակին վրայ: Գրիգոր վարդապե-
տի գլխատուած մարմինը ծորակի մը աիդ-
մերուն մէջ չաղաղեալ գտնուած է: Գըտ-
նուած է ընտանիք մի որոյ 16 անդամներն
միասին սպաննուած են: Կոյրեր կաղեր և
համբեր ալ սպաննուած են:

Տուներու, փողոցներու, արտերու ու
ձորերու մէջ ինկած այս հազարաւոր դի-
ակները օրերով անթաղ մնացած են. չա-
տեր ալ գազանաց կեր եղած են. այս
պատճառաւ ալ կատաղութիւն եկած է
չուներու վրայ, որոնք սկսած են խածնել
զինուորներն ու թրքերն: Կառավարու-
թիւնն ստիպուած է բնաջինջ ընել դա-
նոնք: Մեռնողներն գերեզմանատուն տա-
նելու և թաղելու բաւական մարդ չգըտ-
նուելուն իրենց ինկած տեղերը թաղած
են, ոչ միայն ժամկոչներու ձեռամբ, այլ
հանդիպող մարդոց և զինուորներու ձե-
ռամբ: Հազարաւոր վիրաւորեալներու հա-
մար չկայ ոչ հիւանդանոց, ոչ վիրաբոյժ
և ոչ ալ դարման:

Կոտորածէն ազատող բազմութիւնը
մեծ ու փոքր խումբ խումբ կառավարու-
թեան մօտակայ շէնքերու և հրդեհէ
զերծ մնացած Հայոց տուներու մէջ հա-
ւաքուած են: Այր մարդոց կրօնափոխու-
թիւն առաջարկուած է, ընդունողը ազատ
ձգուած է իսկ չընդունողը բանտարկուած
է: Շատ հայ կիներ ու օրիորդներ ոտտի-
կաններու և զինուորներու կողմէն տեղէ
ի տեղ փոխադրուելու ատեն բռնարար-
ուած են: Ուրիշներ ալ առեւանգուած
ըլլալով մինչև ցարդ թրքաց տուները կը
մնան Այժմ բանտարկուածներուն թիւն
է 400: Ամեն այր մարդ որ սպաննուած
կամ վիրաւորուած չէ, ինչպէս նաև կրօ-

նափոխութիւն ընդհանած չէ, անշուշտ բանտարկուած է: Կառավարութեան յարակից շէնքեր բանտի փոխարկուած են: Թէ բանտերը եւ թէ այս շէնքերը այնքան լեցուած են բազմութեամբ որ շատեր գիշեր ցերեկ ոտքի վրայ մնալու դատապարտուած են: Այս դժբաղդներու մէջ վիրաւորեալներ ու հիւանդներ ալ կան: Բոլոր բանտարկեալք սնունդէ, օդէ, լոյսէ ու դարմանէ զուրկ կը մնան իրարու վրայ կուտակուած իրր դիակներ և ոչ թէ մարդ: Վիրաւորեալները և հիւանդները իրենց ցաւին ու ծարաւին սաստկութեանէն, ուրիշներ ալ իրենց անօթութենէն օգնութիւն կ'աղաղակեն բայց լսող չկայ: Բանտարկեալներու մէջ կը գտնուի նաև Առաջնորդի փոխանորդ Տ. Յուսիկ քահանան, որ իւր խղճի հակառակ վկայութիւն չտալուն համար բարտարկուած է:

Մնացեալ հասարակութիւնը մեծ մասամբ ծերունիներ, կիներ ու մանուկներ, վիրաւորներ ու հիւանդներ իրարու վրայ ցիգուած են Հայոց անվնաս մնացած տուններու ինչպէս նաև վարժարաններու ոչ առաջնորդարանին մէջ, Սոքա բոլորն այլ

չորաբեկ հացէ, զգետտէ և գիլերային
չածկոյթէ և դարմանէ զուրկ են: Փոքր
Ախիոյ մէջ ամենէն աւելի այս քաղաքը
կրած է ընդհանուր կոտորածի ու աւեր-
ման հետեանքն, և իբր այն՝ ամենէն ա-
ւելի չուտ և շատ օգնութեան կը կարո-
տի:

Արարիկերի չըջակայ հայ գիւղերը ևս կողոպտուած ու աւերուած են: Զկայ գիւղ մը և չկայ ընտանիք մը որ իւր բոլոր ստացուածքը կորուսած և քուրճ հագած ու մոխրի վրայ նստած չըլլայ: Շէփիկ, Վաղշէն, Քունայ, Էհնէցիկ, Մաշկեր և այլ գիւղերը աւարի տրուած և հրգեհուած են, բնակիչներն ալ որակոտոր եղած են: Անջրգի գիւղի հայ բնակիչները կոտորածէ մը պատեղու համար կ'որոնափոխ եղած են: Բոլորն ալ մեծ ու փոքր թլփատուած են, տնուներն փոխուած է, ու մզկիթ կը յաճախեն: Մեռնողները, որոց մէջ քահանայ մը, մահմետական ծէսով կը թաղուին: Մինչև ռեզամ այս տաք թաքաղգներն մահմետական անունով կ'ըստորագրեն այն նամակները զորս կը խըրկեն իրենց պանդուկներուն:

ՄՏ ՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏՆՂԵԿԵՐԻՐ ԽԵՐԲԵՐԴ ԳՆԻՆՈՒ ԿԵՑՈՒԹԵԱՆ	Ներկայ գտնուած այլ, կին և մանկտի կարծ. անալ :	ՆԱՄԱԿ Տաճկաց կողմանէ քա- նութեամբ իրենց նիգ- եայ ըրած կին և աղջիկ :	ԽԱՐԲԵՐԴԷ Քաղաքում, ք. նյու յաւ- ն և հողեհաւած եկեղե- ցի և վարժարան :	Բանութեամբ թշխա- ուած և իրականացուած :	Հրդեհուած տուներ :	Վերադարձուներ :	Սպանուած վարդա- պետ, քահանայ, երէց և դաստառ :
Մ. Ազիզ և Խարբեր- դու 59 գիւղերը :	29804	345	108	4643	9890	1987	14
Արաբկեր և Իւր գիւ- ղերը :	17975	216	19	1540	5960	1340	6
Ա. Կն, Ա. Դնայ նահիէն, Հիւճք ու Բէնկան :	9511	193	38	2320	1860	1195	4
Կապան Մատեն քա- ղաքը :	460	—	6	113	—	8	—
Մալաթիա, Հ. Ման- սուր Պէհնի, Բէխ- դահ, Մազկերտ :	11680	195	13	3451	5602	1721	7
Տէրսիմ, Չարսան- ճաք, Չիմիկէզէք, Խղլքիլիսէ :	13850	156	27	1573	2350	710	9
Բալու և Իւր գիւ- ղերը :	11625	427	16	1540	2900	990	11
Գումար	94905	1532	227	15180	28562	7970	51
Ընդհանուր գումար սպանուածներու					39,234		

ՆԱՄՆԿ Կ. ՊՈԼՍԷՆ

(Մեր յատուկ թղթակցէմ)

Կ. Պոլիս, 13 Յունուար, 1896

Իմացաք անշուշտ թէ՛ Տարտանէլի ամրացումն և պաշտպանութիւնն Ռուս սպաներու յանձնուած է :

Պոլսոյ մէջ ալ գրեթէ պարապ զօրանոցներ կան հաւանականաբար ի հարկին Ռուս բանակն ընդունելու համար :

Նազըմի պատրաստել տուած Հայաստանի այն քարտէզն՝ յորում Տիգրիս Հայաստանի մայրաքաղաքն նշանակուած է, Ռուսաց Հայոց դէմ՝ ատելութիւնն գրգռած է : Կաւկասիոյ մէջ և մանաւանդ ի սահմանագլխի հալածում կայ Հայոց դէմ . շատ խստութիւններ և բանտարկութիւններ ի գործ կը դրուին :

Դժբաղդաբար այս տարւոյ ձմեռն ծանր է ի Թուրքիա : Ճամբաներն գոցուած են, գէշ լուրերն իսկ չեն հասնիր : Կ'ըսուի թէ հազարաւորներ նօթութենէ և ցուրտէ կը մեռնին :

Ձէյթունցիք դրժած են իրենց եղած վատ առաջարկներն և խաղաղութեան առաջարկ դրած են հետեւեալ պայմաններն .

Ա. Չեմք յանձներ մեր զէնքեր .

Բ. Չեմք շիներ և չեմք հաճիր որ շինուին Ձէյթունի զօրանոց բերդն :

Գ. Հինգ տարի տուրք չեմք կրնար վճարել :

Դ. Մշակութեան համար մեզի հոդ պէտք է տրուի :

Ե. Ձէյթունի կառավարիչն և պաշտօնէութիւնն Հայ պէտք է լինի քանի որ ուրիշ տարր չկայ անդ :

Սուլթանն ի լուր այս առաջարկութեանց բարկացեր և ուխտեր է անպատճառ բնաջինջ ընել Ձէյթունը : Սակայն զգալով առ այս զօրաւոր բանակի մի և մեծամեծ ծախսուց պէտքն՝ դրամ գտնելու կ'աշխատի :

Գաւառներէ դրամ հասնին դադրած է . կառավարութիւնն Պոլսոյ հրապարակէն փոխառութիւն մ'ընել առաջարկեց և չյաջողեցաւ : Միտախտի Րէժիի փոխառութեան խնդիրն վիժած է : Գերմանիա կը յօժարի կանխաւ բանակցութիւն եղած Չ միլիոնի փոխատուութիւնն ընել պայ-

մանաւ որ ուիցէ մէկ եկամտի ապահովութիւն տրուի իրեն . սակայն արդէն բոլոր եկամուտներն պարտուց և փոխառութեանց յատկացեալ են :

Ազարեան վերջապէս համոզուած է թէ՛ Թուրքն Հայ ցեղի անհաշտ թշնամի մ'է առանց կրօնի զանազանութեան, և սկսած է փոխել իւր թրքամոլ քաղաքականութիւնն, այլ շատ ուշ :

Իմացաք անշուշտ Արփիարի սպանութեան փորձն՝ զոր Դրօշակեանց կը վերաբերեն, զի սոքա բազմիցս ՀԱՅՐԵՆԻՔԻ որպէս այլ թերթերու ազդարարած էին շտպել Հայոց կողմանէ ճշմամբ առնուած ոտայօդ ուղերձներն և այլ նմանօրինակ գրութիւններ : Արփիարի վէրքերն թեթեւ էին և գրեթէ արդէն լաւացած է :

Միւս Հայ թերթերն չեն հրատարակեր այլ ևս պաշտօնական ազդերն աւարկելով թէ՛ միւսնոյն կրնայ պատահիլ իրենց եթէ հրատարակեն :

Արաբկերէն եկած նամակ մի տեսայ, իսլամութիւնն ընդունող Հայ ընտանիքէ մը գրուած, որով կը ծանուցանէին իսլամութիւն ընդունելով մահուանէ ազատելին և ընտանեաց իւրաքանչիւր անդամի նոր անուններն, Անշայ, Մուսթաֆայ և այլն :

Այսօր Ձէյթունի մօտերն տեղի ունեցած նոր ընդհարման մի լուրն տարածուեցաւ : Չգիտեմք թէ մինչև որ աստիճան ճշմարիտ է այդ :

* *

20 Յունուար, 1896

Կոտորածոց մասին ընդարձակ տեղեկագրեր կը հասնին ի Պատրիարքարան : Կարծուածէն ու հաշուուածէն մեծ է եղած Հայոց կորուստն :

Բռնութեամբ իսլամութիւն ընդունողներ պատրիարքարան կը գրեն և կը նկարագրեն իրենց վրայ ի գործ դրուած բարբարոսութիւններն : Աննկարագրելի են Արաբկերի թրքացած 16 գիւղերու կրած աղէտներն : Պատրիարք Սրբազան ասոնց մասին խիստ տեղեկագիր մի յղեց Դրան : Բազմաթիւ են կողոպտեալ եկեղեցիներու թիւն և ոչ նուազ մզկիթներու վերածուածներն :

Կոտորածի մասին անգութ Համիտի գծած ծրագիրն աւելի ընդարձակ է և

դեր: Սուլթանն կը ցաւի որ իւր մի քանի կառավարիչներ և զօրաց հրամանատարներ, հակառակ իւր հրահանգաց՝ ջանացած են պաշտպանել խաղաղութիւնն: Այս խաղաղասէր պաշտօնէից գլխաւորն է Պրուսայի կառավարիչն՝ որ ոչ միայն Սուլթանի կողմանէ երեք անգամ ջարդի մասին արուած հրահանգներն չգործարարեց, այլ և մոլեռանդաց կողմանէ սկըսուած յուզումներն հանդարտեցուց և որոց վասն վերջերս պաշտօնանկ եղաւ: Պէտք է և յիշատակել Եւդոկիոյ զօրաց հրամանատարն՝ որ բուն զօրութեամբ կ'աշխատի խաղաղութիւնն պահպանել ոչ միայն քաղաքին այլ և անոր հպատակ զիւղաքաղաքաց և գիւղօրէից մէջ: Վանայ քաղաքի ջարդէ գերծ մնալու շարժառիթն դեռ բացատրուած չէ:

Սուլթանն՝ կամելով անպատճառ գահընկէց ընել Հայոց երկաթէ Պատրիարքն՝ իւր հաւատարիմ ծառաներու, նուրեանի և Սէֆէրեանի, միջոցաւ կամեցաւ Ազգին կողմանէ հանրագրով մը բողոքել Պատրիարքի քաղաքական ընթացքին դէմ և նորա հրաժարումն խնդրել: Այս թրքամօլ պաշտօնեաներն գործի սկսաւ, սակայն չկրնայով իրենց ձեռնարկի համակիրներ գտնել, սպառնալեաց թղթերու ազդեցութեան տակ անկարողութիւննին խոստովանեցան:

Նազըմի բերան եղող «Լոյս» հանդէսն վարպետութեամբ հիւսուած և ազգասիրական գունով ներկուած յօդուածներով ջանաց ժողովուրդն Պատրիարք Հօր ընթացքին դէմ յարուցանել: Սակայն Հայերն այնչափ յարեալ են իրենց ազգասէր Պատրիարքին՝ որ այդ կարգի միջոցներ չունին սեիցէ ազդեցութիւն:

Դուն զգալով վերջապէս թէ՛ Ազգն ամբողջութեամբ կապուած է Պատրիարքին, և անհնար է պահեցնել զայն յաշս իւր հօտին, և Եւրոպիոյ մէջ Իզմիրլեանի հիացողներու թիւն օր քան զօր կ'ածի, կը փորձէ մերձեցում մը ձեռք բերել, Այլ ևս չպնդեր ծանօթ կենդակի պատրաստութեան մասին: Վերջերս ալ զորկեց Արրահամ փաշան, որպէսզի համոզէ Պատրիարք Հայրն թէ՛ այս ամեն շարեաց միակ դարմանն անձամբ Սուլթանին դիմելով նորա հայրական գութն հայցելն է: Պատրիարք Սրբազան ոչ միայն դրժեց այլ և համոզեց զայն թէ, շարեաց առաջ-

քըն առնելու համար՝ շարեաց հեղինակին դիմելն անհեթեթ է. նկարագրեց ազգին վիճակն: Արրահամ փաշայ համոզեալ վերադարձաւ, և այժմ ամեն ուրեք իր խօսի թէ՛ դեռ չէ տեսած Իզմիրլեանի պէս քաղաքագէտ հայ կղեր մը: Հաւանական կը թուի քիչ ատենէն Պատրիարքարանի և Դրան մերձեցումն:

Վերջերս գումարեալ Խառն Ժողովոյ մէջ Պատրիարք Հայրն ըսած է թէ, «եթէ իւր հրաժարմամբ Ազգն կը նպաստուի, պատրաստ է թողուլ իւր աթոռն, ևն.» Ժողովականք միաձայն պատասխանած են թէ անընդունելի է իւր հրաժարումն, թէ ըմբ միայն կարող է Ազգին ներկայ վիճակին դարման տանելու:

Քաղաքական շրջաններու մէջ կը խօսուի թէ՛ Ռուսիոյ և Թուրքիոյ միջև համաձայնութիւն մի գոյանալու վրայ է. և հաւանականաբար Ռուսիա հինգ տարուան համար պիտի գրաւէ բարեկարգելի հայաբնակ 6 գաւառներն:

Պատրիարքարան տիւ և գիշեր կ'աշխատի օգնութիւն հասցնել Հայաստանի մերկ և նօթի կարօտելոց: Ցարդ ղրկուած է շուրջ 6,000 օսմ. ոսկի և 33 յակ զգեստ: Հանգանակութիւնք կը շարունակուին:

* *

Կ. Պոլիս, Յունուար 30,

Ձէյթունի մասին Սուլթանն չափաւորած է իւր պահանջներ և միայն զէնքերու յանձնելն կառաջարկէ. կ'ընդունի Սուլթան Սէլիմի և Մէճիտի տուած առանձնաշնորհումներն. այսինքն թէ Ձէյթուն իւր 18 գիւղերովն՝ Ձէյթունի չորս հայ Իշխաններէ կառավարուին և վճարեն միւսին տարեկան 24,000 զուլուշի տուրք մը: Ձէյթունցիք այժմ ի ձեռին չունին իրենց այս առանձնաշնորհումն տուող հրովարտակն, զի կառավարութիւնն՝ չնորհիւ Աղարէկեանի՝ ձեռք անցուցած է զայն:

Մեր լեռնականներն տրամադիր չեն բաւականանալ ասով և կը խնդրեն Հայ Լեռան Ձէյթունի հետ միութիւնն: Հայ Լեռն ապստամբած է և Ձէյթունցոց տրուած առանձնաշնորհումներն կը պահանջէ:

Հնչակեանք հանգանակութիւն կ'ընեն և մեծաքանակ դրամ կը հաւաքեն Ձէյթունի համար, զորք կը ղրկեն իրենց

կեդրոնն ի Լոնտոն: Այս հանգանակիչներ չափ խիստ կը վարուին իրենց դիմումներն մերժող հարուստներուն դէմ: Քաղաքիս հարուստներէն Գարակէօզեան Տիգրան 200 ոսկեոյ նպաստ մը դրժած ըլլալուն դաշոյնի հարուածով մը վիրաւորուեցաւ Յունուար 21ին, և մեռաւ մի քանի օր վերջ: Շատ անմեղներ ձերբակալուեցան այս առթիւ: Կ'ըսուի թէ մի քանիներու մահուան վճիռն զրկած են: Հայն Հայուն դէմ, միթէ ամօթ չէ՞:

«Դիմաքսեան» խումբն՝ որ վերջերս զարգացաւ, կը հալածուին Նազըմի կողմանէ. մի քանիներ ձերբակալուած են:

Այլ նորակազմ խումբեր ալ երևան ելած են, յորս և «Սենեքերիմեան», «Չայն Հայաստանի» են. ցաւալի է այս բազմաթիւ խմբերու գոյութիւնն:

Հայաստանի վիճակն տխուր է, հասած նպաստներն անհամար կերպիւ անբաւական են. ցուրտն ու սովն կը կոտորեն: Անգութ եւրոպա գոնէ իւր նպաստներով անմիջական մահէ թող զերծ պահէ խեղճ Հայերն:

Քաղաքաց մէջ իսկ՝ ողջ մնացողներ, չեն յանդգնիր դեռ իրենց ապաստաններէն դուրս ելնել. և ինչ ընեն դուրս ելնելով. քանի որ իրենց խանութներն կողոպտուած և թուրքերէ բնակեալ են, որք իրենց կողոպուտներն ի վաճառ գրած են անդ:

Լուր կը շրջի թէ՛ Ղարապաղի Հայերըն Պարսկաստան անցած են և անդ խրմբեալ չափ մը Հայերու հետ միանալով թուրքիոյ սահմանն անցած են, և վանայ վերայ կը քալեն: Անհաւանական կը թուի այս լուր, և թէ մի գուցէ վանայ մէջ խոնեալ 80,000 Հայերն ջարդելու պատրուակ մը ըլլայ սա:

Կ'ըսուի թէ վանայ Պողոս վարդապետըն սպաննուած է:

ԾՈՎ

ՈՒՐՅԱՅԻ ԿՈՏՈՐԱԾՆ

Ամերիկացի միսիոնարուհի Օրիորդ Քօրինա Շատըք գրած է Ուրֆայէն, Յունուար 7 թուականաւ, և նկարագրած է 28 Դեկտեմբերի անդ տեղի ունեցած ջարդն: Կ'ասէ թէ Սիւրիացուց և Հոռովմէական կաթոլիկներուն խնայեցին, բայց լուսա-

ւորչական և բողոքական Հայերն իրենց բոլոր սեփականութիւններէն գլխովին զրկուեցան: Սպաննուածներու թիւն էր 3,500 կամ 4,000: Ասոնց 1.500ն լուսաւորչական մեծ եկեղեցւոյն մէջ ջարդուեցան: Շարաթ օրն քաղաքին այդ մասին հազիւ ձեռնամուխ եղած էին յարձակողք, և բազմութիւն Հայոց վազած էին յեկեղեցին ապահովութեան համար այդ գիշեր: Կիւրակէ առաւօտ կանոխ գործն վերսկսաւ և երբ խաժամութն հասաւ յեկեղեցին, զինուորներն կոտորեցին դուռնքն ու ներս մտան: Սկսան ջարդն: Մի ամբողջական ողջակէզ էր: Միւսիւրմաններու շատ դասեր մասնակցեցան այսմ: Օրերով քաղաքին միջնուրտն անհանդուրժելի կերպով գարշ կը հոտէր: Ապա ըսկսան մաքրել:

Երկու օր դիտեցինք մարդիկն որք շարունակ սոկորներու և մոխրոյ պարկեր քաշելով կը տանէին: 1500 դիականց ընդ քարշ տարուիլն դէպ ի փոսերն աւելի շուտ կատարուեցաւ՝ օգնութեամբ անասնոց: Ամենէն յետոյ հորերն մաքրեցին: Մի մեծ ջրհորէ վաթսուն մարմին հաներ են կ'ասեն: Հաւաստեալ գիտեմք թէ որիշ հորէ մի քան դիակուք հանուած են: Իբր Յ հօրիւր հոգիք խոյս տուին եկեղեցիէն տանիքին վրայէն:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼԻԲԱԼ ՆԱԽԱՅԻՆ ԿՈՒԻՆ

ԸՆԴԴԵՄ ԹՈՒՐԻՈՑ

Ըստ Արմի էնտ Նէյվի ծըրնըլըն՝ Ամերիկայի նաւային յայտագիրն Աքեւելից մասին բաւական ընդարձակ էր, և ի նկատի ունէր մեծ նաւատորմիզ կեդրոնացնել ի Չիլեանիա, Քանտիա, Իսկէնտէրուն կամ Պէյրութ: Վերջին երկուքն դուրս ձգուեցան ի վերջոյ, Իսկէնտէրուն, վասն զի անոր գրաւումն գուցէ շատ չազդէր Դրան, և Պէյրութ՝ զի յոյժ փոքր է: «Չիլեանիա առնու համար, կ'ասէ ծըրնըլըն, պէտք պիտի լինէին իբր 15,000 մարդ: Այս կը նկատուէր յարձակման ամենալաւ կեան, չբացառելով Չիլեանիա: Տոյց կը տրուէր թէ ընտիր ռազմագիտական կէտ մ'էր՝ և անոր առումն սարսափ պիտի պատճառէր թուրք պաշտօնէից որք պիտի փութային համակերպիլ մեր պահանջ-

մանց: Զմիւռնիա ուղ, կ'ասէին, գրաւել լաւ կը լինէր, բայց ցամաքային յարձակման մի վտանգն, գրաւման դէպքին մէջ, իբրեւ փառս կը յիշուէր այս ծրագրի դէմ: Եթէ Թուրքիա աւելի հոգածու երեւած չլինէր, ի պաշտպանել աբրիկեան շահերն և եթէ Ռուսիա համաձայնութեան եկած չլինէր Սուլթանին հետ, ամեն պատճառ կայ հաւատալու թէ եռանդայիլ մրցում մի տեղի պիտի ունենար Միացեալ Նահանգաց ուժերուն և Թուրքիոյ միջև: Տարակոյտ չկայ թէ մեր նաւատորմի զորքի յաղթահարէր զթրքականն:»

ՀԱՅԵՐԷՆ ԼԵՁՈՒՆ

ԵՒ «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ»

Վիէննայի Մխիթարեան Հայրց կողմէն է հրատարակուող ՀԱՆԴԵՍԱՆ Փետրուարի թուոյն մէջ համառօտ քննադատական մի կայ քնդդէմ այն հակիրճ յօդուածին զոր արդի հայերէնի նուիրած էինք առթիւ Գեորգ Սյունեան չոր Յոբէլեանի (Հայք, թիւ 109, 1895):

Հանդէսն թէ՛ զմեզ և թէ՛, կարծեմք, զիւր բոլոր ընթերցողներ աւելի գոհ արած պիտի լինէր եթէ մեր գանգատին գիտական վեհանձնութեամբ պատասխանէր՝ պարզելով յատուկ ուսումնասիրութեան մի մէջ թէ ինչ են այդ դպրոցի հայերէնին բառական և շարադասական տարբերութիւններն Պոլսեան գրական հայերէնէն:

Ոչ ոք քան զմեզ աւելի խորին յարգանք կը տածէ Գեորգ Սյունեանի և Հանդէսին նկատմամբ, բայց ասինք մեր քննադատեալ յօդուածին մէջ և նորէն կ'ասենք թէ հայերէն լեզուի մասին Հանդէսին ուղղութիւնն, իւր բոլոր լաւ յատկութեամբ հանդերձ, չէ բառական գոհացուցիչ:

Հանդէսէն կ'անեմք այս խիստ պահանջ վառն զի նա՛ է մեր առաջին գիտական և միանգամայն գրական Հանդէսն:

Թէ մեր գոգոհութիւնն անհիմն չէ՛, պիտի գամք ցուցնել մեր մօտակայ թիւերէն միոյն մէջ երբ ուրիշ նիւթոց քանակը թոյլ տայ: Յայնժամ թերեւս տեսնուի թէ Հանդէսին առ մեզ ուղղեալ արած այր քննադատութիւնն արդար չէ:

ՄԻԵՐԻԿԵՅԻ ՀԱՅԵՐԵԱՆ

Սիրելի Հայ եղբարք և բարեկամք:

Ձեզմէ շատերուն ծանուցումն է թէ Մր. Ֆ. Հ. Ուիկին, Ամերիկեան Պօրտի գանձապետն զրկած է ստակ ձեր թշուառ եւ տառապեալ ընտանեաց ի Թուրքիա: Սկըսեալ Դեկ. 28 էն մինչև այսօր 25,600 էն աւելի թէ՛ զրկուած է: Տակաւին ժամանակ չէ լսելու թէ ստակներն իրենց տեղերն հասած են: Բայց ունինք պատճառ հաւատալու թէ ապահովութեամբ պիտի հասնին: Ամեն հարկաւոր խնամք ի գործ կը գրուի զրկուած ստակներն կորուստէ ապահովելու և անվտանգ իրենց տերերուն յանձնելու: Եւ եթէ այս ստակներն կողոպտուին ի ճանապարհին կամ ուրիշ կերպով կորսուին, Պօրտը երբէք պատասխանատու չէ. Պօրտը կընէ այս գործը ձրի իբր շնորհք ձեզի և ձեր բարեկամաց, և դուք պէտք է որ յանձն առնէք կորուստըն եթէ պատահի:

Երկրորդ, Պօրտը ստակ չզրկեր, բայց միայն նպաստելու տառապելոց ի Թուրքիա: Սովորական առեւտուրն կրնայ կատարուիլ առեւտրական ուրիշ եղանակներով: Պօրտը կընէ ասիկա և պատրաստ է ուրախութեամբ ընելու, որովհետեւ հարկաւոր է: Բայց հաճեցէք ստակ զրկել միայն նպաստելու և ոչ ուրիշ նպատակաւ:

Երրորդ, Հեռագրաւ ստակ զրկած ենք ձեզմէ շատերուն համար, որպէս զի շահին 13 կամ 14 օր, որ է թղթատարի տեւողութիւնը Պոսթոնէն մինչև Կ. Պոլիս: Բայց հիմա Մր. Պիթ. Պօրտի գանձապետն ի Կ. Պոլիս կը դրէ թէ մի «զրկէք ստակ հեռագրաւ»՝ այն պատճառաւ որ անունները կասկածի կ'ենթարկէ Թուրք կառավարութիւնը: Ուստի այլևս չպիտի զրկենք ստակ հեռագրով, մինչև որ Կ. Պոլսէն գրեն մեզ:

Թոյլ տուէք ինծի որ քանի մը թեւադրութիւններ ընեմ ձեզի որ կը զրկէք ստակ մեզ թղթատարով: 1. Գրեցէք անգլիերէն և կամ հայերէն, բայց գրեցէք շատ ՈՐՈՇ ԿԵՐՊՈՎ, ՄԱՍՆԱԽՈՐԱՊԷՍ ԱՆԱԽՆՆԵՐԸ: Եթէ ուէ մէկը չկրնար գրել Հայերէն լաւ, թող խնդրէ ուրիշ մը որ իրեն համար գրէ: Պզտիկ սխալն կրնայ մեծ նեղութիւն պատճառել: 2. Գրեցէք նախ ձեր բուն անունը (հայերէն) և հաջէն և

յետոյ անոր անունը որուն կը զրկէք քաղաքին կամ գիւղին անունովը, և ձեր ըստակին գումարովը միատեղ և զրկած ըստակնիդ թրքական լիբայով: Մէկ լիւան կընէ 4թլ. 49սթ., 2ն. 8թլ. 98սթ. ևն.: 3. Հաճեցէք զրկել ստակ իմ անուանս ուղղուած ձեր գտնուած տեղէն կանոնաւոր պանքայի չէքով, թղթատարի (մընի օրտըր) կամ էքսպրէսի օրտըրով: Հարկ չէ ընդհանր ընել այս կերպ զրկուած նամակներն: Բայց երբ թղթագրամ կը զրկէք ընդհանր ըրէք ձեր նամակներն: 4. Ձեր զրկած ստակին ընկալագիրը ընդունելու համար հաճեցէք ներփակել ձեր նամակով 2 սենթնոց սաէմի մը:

Շնորհակալ եմ Ձեր առ իս ցուցած քաղաքավարութեան համար անցեալ շաբաթներու միջոցին ինձ հետ ունեցած ձեր թղթակցութեան և տեսակցութեան համար: Կը վստահացունեմ ձեզ բոլոր թէ Պօրտ ընկերութիւնը պիտի շարունակէ իր կրցածը ընել այս դժբաղդ պարագայից տակ:

Թող մենք ամենքս յիշենք թէ Հայաստանի ազատութեան միակ յոյսն Աստուծէն է: Ուստի մենք ամենքս պարտինք անընդհատ և եռանդեամբ ազօթել Անոր որպէս զի պաշտպանէ ու ազատէ ձեր բարեկամները և ողջը:

Անկեղծօրէն ձեր բարեկամը և եղբայրը

M. H. HITCHCOCK.

Boston, Mass., Feb. 15, 1886.

ԱՄԵՐԻԿԵՆ ԻՐԵՒՈՒՆԻՐ Ի ԹՈՒՐԻՔԻՆ

Ամերիկեան խորհրդարանն չիւլի իշխանութեամբ զգեցուց զԳործադիր կառավարութիւնն հզօրագոյն միջոցներ ձեռք առնուլ պաշտպանելոյ համար Ամերիկեան կեանք և ինչք ի թուրքիա: Այս պատգանութիւն թէ և չձգուիր հայ ժողովրդեան վրայ, սակայն ամեն Հայ որ Ամերիկեան քաղաքացի է կամ յայտնած է իւր դիտարկութիւն քաղաքացի լինիլ ըստ օրինաց երկրիս, կրնայ նորին ամբողջ օգուտն վայելիլ:

Յայտնի է թէ թուրքիա անընդհատ կը բռնադատէ իրաւունքն Ամերիկացւոց որք ապահոված են դաշտմբ և սովորութիւնք, և կը բռնադատէ յաճախ անպատիժ: Մէկ պատճառն թէ ինչու Հայ-Ամե-

րիկացիք հազիւ երբէք կրնան առնուլ գոհացում կամ հատուցում այս հասարակ զրկանաց համար, հաւանականաբար այս է որ մեր մեծ մասն չեն գիտեր թէ ինչ են իրենց իրաւունքներն ի թուրքիա, իսկ մի մեծ մասն նոցա որ զայս գիտեն չեն կարող առնուլ հարկաւոր միջոցներն սրմէ տեղեակ չեն: Միանգամայն, մինչ Հայ-Ամերիկացիք այսպէս անգէտ կամ անհարակ կը մնան, Ամերիկեան կառավարութիւնն ինքնաբերաբար հազիւ ուրեք կը միջամտէ, կամ թրքական շատախօսութենէ դիւրաւ կը գոհանայ, քանզի յայտնի է թէ այս երկիրն աւանդութեամբ կը զգուշանայ ունէ ծանր դժուարութենէ հին աշխարհի հետ և զայս քաղաքականութիւն կը տանի մինչև իսկ ցհանդուրժել դաշնագրական բռնաբարձանց: Թուրք կառավարութիւնն ալ հաճախեք կ'օգտի ունէ թուլութենէ զոր օտարք կը ցուցնեն և իւր անամօթ ընթացքին սոսկ սահմանէ այն երկիւղն թէ օտար երկիրն չէ կարող անտարբեր լինիլ գծէ մը անգին:

Վերջին Դիպաց առթիւ Ամերիկայի ամեն կողմէ պահանջ կը բարձրացուի որ կառավարութիւնն աւելի խստութեամբ վարուի թուրքիոյ հետ երբ սա ունէ աստիճանաւ արհամարհէ զԱմերիկեան իրաւունքներ: Մանաւանդ կը պահանջեն մասնաւոր պաշտպանութիւն ի նպաստ Հայ-Ամերիկացւոց: Ներկայ յուզեալ ժամանակն ուրեմն աւելի նպաստաւոր է այն քաղաքացւոց որք նեղուած, անիրաւուած կամ վնասուած են թուրք պաշտօնեաներէ կամ հպատակներէ: Եթէ անաէրունջ Հայք չունին ոք որ իրենց արդարութիւն գործէ, այն Հայք որք բարեբաղդ են լինիլ ընդ հովանեաւ Միացեալ Նահանգաց պարտին պահանջել և ընդունիլ լիւլի տուգանք և գոհացում իրենց մասնաւոր զրկանաց համար:

Այս առթիւ Ամերիկացի մեր հայրենակցաց ուշադրութիւնն կը հրաւիրեմք հետեւեալ ծանուցման:

T. HENRY DEWEY,

ՓՈՐՁԱՓՈՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՓԱՍՏԱԲՈՒՆ

Եւ իւր Օգնական

SARKIS C. KEBABIAN,

ԵՒՅԼԻ ԸՆԹԱՑԱԽԱՐՏ

Պատիւ ունիմք ծանուցանել Հայ հասարակութեան Նիւ Եորքի և չրջակայից թէ խնամով պիտի հոգամք ունէ դատա-

կան գործ , և ու է դժուարութիւն որոյ վրայ կ'ուզուի օրինական խրատ և ջատագովութիւն : Տիրար Բէպապեան պիտի ընդունի իւր Հայրենակիցներ մեր պաշտօնատեղում ուէ օր յետ կէսաւուր :

Նաև այն Հայք , Ամերիկայի քաղաքացիք կամ ընտանեցեալք , որք կրած են ու է զրկանք Հայաստանում և որոյ Համար կ'ուզեն պահանջել տուգանք , կամ ունին ու է գործ որոյ Համար կ'ուզեն այս կառավարութեան պաշտպանութիւնն կամ միջամտութիւնն , կրնան մեզ դրել ու է լեզուաւ կամ դիմել անձամբ , որպէս զի ներկայացնեմք ուր անկ է իւրեանն պահանջն և պաշտպանեմք իրաւունքներն :

Յարգանք ,

Թ. Հէնրի Տիոնի

Ս. Գ. Բէպապեան

Պաշտօնատեղի և Հասցէ ,

48 Wall St.,

New York, N. Y.

ԶԵՅԹՈՒՆԻ ՄԱՍԻՆ ՀԵՌԱԳՐԱԼՈՒԹԵՐ

Լոնտոն , Փետր. 18 . Կ. Պոլսէն Կեդրոնական Լրոց գործակալութիւնն կը հեռագրէ թէ Զէյթունցիք որ ամիսներէ ի վեր իրենց քաղաքն պաշտպանած էին Թրքաց դէմ , յանձնած են իրենց զէնքերն : Հինգ պարագլուխներն , Հնչակի , Հայ յեղափոխական ընկերութեան մի , որք ի Զէյթուն կը գտնուէին երբ քաղաքն պայմանաւ անձնատուր եղաւ Թրքաց , տարւած են ծովեզերքն՝ երկրէն արագքսուելու համար :

Կ. Պոլիս , Փետր. 23 . Իտալական հիւպատոսն ի Զէյթուն գրած է այստեղ նրկարագրելով Զէյթունի ժողովրդին թըշուառ վիճակն : 8 Հազար ապաստանեալք կան հոն , շատք մերկ , և անսուղութիւնն Հարիւրաւորաց կը սպառնայ մահ , և շատ ալ հիւանդութիւն կայ : Պառն Փօն Բալիս , Աւստրիական դեսպանն , Հանգանակութիւն մ'է բացեր տառապելոցն ի նպատոս :

ԵՅԼ ՆԻ ԵՅԼՔ

Կ. Պոլիս , Փետր. 10 . Թուրք երիտասարդ կուսակցութեան մէջ նորոգ գործունէութիւն կը տեսնուի : Ոստիկանու

թիւնն խիստ միջոցներ կ'որդեգրէ անկարգութեանց առջեւն առնու համար : Շաբաթ օրն մի քանի պարագլուխներ ձերբակալուեցան , ի միջի որոց Մահմուտ Պէյ , որդի Մուխթար փաշայի՝ օսմանեան յանձնակատարի : Ոչ սակաւ երիտասարդ Թրքեր և այլք դժգոհ են ընդ մէջ Թուրքիոյ և Ռուսիոյ կատարուած նոր մերձեցումէն :

Ըստ Սփիքըրի՝ Բ. Դուռն , մինչ Տարտանէլի ամրութիւններն կը զօրացնէ , դիմամբ բաց պիտի թողու զՊոսֆոր , քանզի Ռուսական նաւատորմիլ մի կրնայ երեւիլ Կ. Պոլսոյ առջեւ երեք շաբթուան միջոցում ի պաշտպանել զՍուլթանն ընդդէմ յարութի մի :

Լոնտոն , Փետր. 11 . Կ. Պոլսէն Տէյլի Նիւզին կը հեռագրեն .

Զամերիկացի միսիոնարներն Հայկական գործոց մէջ բռնելու ծրագիրն յարատեւութեամբ կը շարունակէ Թուրքիա փորձ մ'է եղած ձերբակալել զՏ. Նէփ , Բաղէշի մէջ փոյթեռանդն գործող միսիոնարաց մին , խռովարարութեան և սպանութեան ամբաստանութեամբ՝ հիմնեալ մի ամբաստանագրի վերայ զոր բռնի ստորագրած են մի քանի Հայեր ի բանախ : Տ. Նէփ դիմած է Ամերիկայի ներկայացուցիչ Տ. Թէրէլի որ տեղեկացեր է Մշոյ հիւպատոս Հէմփրնէ թէ ամբաստանութիւնն անհիմն է , լսկ պատրուակ զմիսիոնարն երկրէն արտաքսելու :

Տ. Թէրէլ կը պնդէ թէ , եթէ ամբաստանութենէն ձեռնթափ չեն լինիր , Տ. Նէփ պէտք է հոս բերուի և դատուի իւր առջեւ :

Ուօշինկթըն , Փետր. 18 . Այսօր Թէրէլի կողմէն յղուած հեռագիր մի կը ծանուցանէ թէ Օր. Բլարա Պարթըն , յաջողած է ստանալ Թուրք կառավարութեան թոյլտուութիւնն ի բաշխել նպաստ Հայ նեղելոց : Տ. Թէրէլ զՕր. Պարթըն ներկայեր է Դրան և նորոգ ապահովութիւն ընդունել լիւրի պաշտպանութեան իւր բոլոր օգնականաց համար որք սղորմութիւն բաշխելու պիտի զբաղին : Օգնականքն պիտի երթան իսկոյն ներքին գաւառներն : Օրիորդ նախագահն իւր կեդրոնատեղին պիտի տնէ զԲերա : Հեռագիրն կը վերջանայ սա բառերով . « Դուռն յայնաբայ կեցած է այժմ պիլոութեան համար » :

Փետր. 6ին Կ. Պոլսէն կը գրէ Էսօշի-
էյթէտ փրէնսն—

Ապտուլլահ փաշա մին է անդամոց
այն Յանձնաժողովին զոր Դուռն առաքեց
ի գաւառներն ի քննել կոտորածոց դէպ-
քերն և հանգարտել զերկիրն։ Ի Սերաս-
տիա հասնելուն յաջորդ օրն նոքա կոչե-
ցին երեւելի թրքերն ու Քրիստոնեաներն։
Միւսիւրմաններուն սապէս ասին. «Ձենէ
այսքան չէինք ակնկալէր, բայց ալ արեւ
լմեցուցեր էք, ինչ որ է։ Այսուհետեւ պար-
տիք խաղաղ մնալ»

Իսկ Քրիստոնեաներուն գովեցին Սուլ-
թանին բարեշնորհ կառավարութիւնն։ «Ար-
եամբ ձեռք բերած եմք մեք ինչ որ ձեռք
բերած եմք, և արեամբ, արեամբ միայն
ձեռքէ պիտի հանեմք այս կոտորն (չՀա-
յաստան) եթէ երբէք անկէ զրկուիլ հարկ
լինի»։ Ոչ ինչ հարցաւ քրիստոնէից, երբ
խօսքերն աւարտեց, ճամբեց զանոնք։

Շնորհակալութեամբ ստացած ենք հետեւ-
եալ հրատարակութիւններն։

ՊԱՐԱԳՐԱԲ

ՓԱՐՁ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԻԻ ԿԻԼԻԿԻՈՅ

Մատենադարան «Արաքսի» Պետերպուրկ.
1894, 400 երես, բազմաթիւ պատկերօք, Գինն
է մէկ ըսկալի 25 կոպէկ։

Այս գործ յոյժ գեղեցիկ տպուած և կարի
հետաքրքրական է։

ԱՐԱՔՍ

ԳՐԱԿԱՆ ԵՔ ԳԵՂԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՀԱՆԴԵՍ

1894. 1895. Գիրք առաջին։ 248 երես է
ըստ հանդէսն, ըմաիր պարունակութեամբ, և
182 երես՝ գեղարունակաւ բաժինն։

Այս պատուական հանդիսի տարեկան
բաժանորդագիրն է միայն երկու տուար (երկու
հասարակ համար)։ Եւ սակայն բաժանորդագ-
րութիւնք կանխիկ չեն վճարուիր, խմբագրու-
թիւնն սաստիկ մեղմ ինկած և պիտի դադրե-
ցունէ եթէ կանխիկ վճարմամբ բաւական բա-
ժանորդ չունենայ։

Այս ամենն կը ցուցնեն թէ մեր մէջ ազ-
գային կրթութեան և վերածննդեան համար ե-
ղած ջանքերն ինչ զփուարութեամբ կը համ-
դիպին, և թէ հայոց «ազգասիրութիւնն» որ-
քան խակ է դեռ...

Արաքսի հասցէն է
Simeon Goulamirantz,
St. Petersburg, Russie.

Նոյն հասցէին պէտք է դիմել ԿԼԻԿԻՈՅ
գիրքն գնելու համար ևս։

ՏԱՐԵՑՈՑԻՑ հայ-ռուսներէն (պատկերա-
զարդ) 1896 թուականին, խմբ. Տ. Ղևոնդ քհ.
Փափագեամ, Կալաց։ Գին մէկ ծրանք։

Արմէնիա իւր 47 թուոյն մէջ մեծ սխալ
մը հրատարակած ըլլալուն սա ուղղու-
թիւն կը յայտարարեմ իբրեւ անդամ
հանգանակիչ մասնախմբին, թէ Արաքի-
ւրի հայ արկածելոց համար ի Գահիրէ հան-
գանակեալ 200 ոսկին մէջ միայն 60 ոսկի
ունին Պօղոս Էֆ. և իւր ընտանեկան պա-
րագայքը։ միւս 140 ոսկին ուրիշ հայ ազ-
գայիններէ և մեծաւ մասամբ Արաքիւրցի-
ներէ նուիրուած է իրենց հայրենի երկրի
հեք դժբաղդելոց։

Գահիրէ, Յունվար 20

ԱՄՊ

Կը խնդրուի ՀԱՅՔԻ Արգոյ ընթեր-
ցողներէն որ հաճին լուր տալ և կամ հաս-
ցէն զրկել խորհրդ գաւառի խաղաղեղ-
ցի խորհրդի Կարապետին որդին Պետրոսին,
որ Շիրակոյի մէջ կամ մօտերն կը գըտ-
նուէր վերջերս, քանզի կարեւոր նամակ-
ներ ու լուրեր եկած են հայրենիքէն այն
անձին հաղորդուելու։

Երախտապարտ կը կացուցանէք զմեզ
յիշեալին հասցէն զրկելով—

Մ. Գ. Քիւրքճեան,
181 5th St. Grand Rapids, Mich.

Ա. Ռ.

ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆ «ՀԱՅՔԻ»

Բաժանորդագներն կրնան յղուիլ հե-
տեւեալ կերպերով։

Ամերիկեան տուար թղթադրամ նա-
մակի ծոցով։

Ամերիկեան փոսթ-օթէմփ նամակի
ծոցով։

Մընի Օրտըր։

Օտար երկիրներէն դրամ յղելու հե-
տեւեալ կերպերն կան։

Մընի Օրտըր։

Քրէտի Լիօնէի փոխանակագիր։

Ֆռանսական դէմպլ-բօսդ։

Դրամ պարունակող նամակներն ա-
պահովագրել պէտք է։

Կը խնդրենք յատկապէս որ յիշեն
Հայք ուղղողներն թէ բաժանորդագրու-
թեան մեր պայմանն է կանխիկ վճարում։

Հասցէ

Editor of "HAIK" 202 West 23d St.,
U. S. America.

Կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգրին է
ստանալու երկրորդ համար
երկու տալեր կամ տասն ֆրանք
կանխիկ

ԱՌՊՈՒԼԿԱՐԱՐՆԱԿ ԲՍԺԱՆՈՐԴՍ

«ՀԱՅՔԻ»

Կը խնդրուի Պուլկարաբնակ մեր պա-
տուարժան բաժանորդներէն և բաժանորդ
գրուիլ փափակողներէն որ Հաճին փու-
թալ իրենց թէ՛ անվճար մնացած և թէ՛
1896 տարույ բաժանորդագրներն հատու-
ցանել Հանդիսիս գործակալ Տիար Գ.
Տէօքմէճեանի ի Բուսշուք:

Ե.ՉԴ

Եթէ կը փափաքիք ունենալ Հայոց
Պատմութեամբ երևելի անցքերուն, Հայ թագա-
ւորներուն, Հանրաժամութեամբ Ազգայիններուն, Նշա-
նաւոր Հայ գործիչներուն, Հայ Լրագրութեան
Հարիւրամայ Յորէլեանի, Վեհ. Հայրիկի, Ամեն.
Իզմիրլեանի ևն. ևն. պատկերներն՝ գիմեցէք
Գ. Տէօքմէճեանի, Յանձնակատար-Գործա-
կալ ի Բուսշուք (Պուլկարիս):

ԺԱՄԵԳՈՐԾ

Պատիւ ունիմ ծանուցանել թէ ճար-
տարապետ շոգեշարժ մեքենայից լինելով,
կը զբաղիմ նաև ժամագործութեամբ ե-
րեկոյներն ժամ 8էն մինչև 11 ժամացոյց
նորոգելու:

Նաև կը գտնուին քովս ամեն կար-
գի նոր ժամացոյցներ ալ աժան գներով:
Անոնք որ կը փափաքին ազէկ ժամացոյ-
ցի մը տէր ըլլալ առանց որս լինելու խա-
բեայ Հրէյից և այլ ազգաց որք կրկնա-
պատիկ գինն կը պահանջեն, կրնան դի-
մել մեր Հասցէին:

MISAK M. PHILIP,
25 Monroe St. New York.

ՈՒՍՏԸՐԻ ՀԻՆԴ ՍԷՆԹ

ԽՆՍՅԵԼՈՒ ՊԱՆԲԱՆ

Այս պանքան հիմնուած է 1854ին.
Կ'ընդունի մինչև անգամ հինգ սէնթ:
Ժամերն են կէս օրէն առաջ 9էն մինչև
կէս օրէն վերջ 4: Շաբաթ օրերն 9էն
մինչև 1:

Հասցէն է 314 Մէյն փողոց:

BUSH & Co.

Պ Ո Ւ Շ Ե Ի Ը Ն Կ.

(Հաստատուի 1849)

65 Front St., Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին
և շափաւոր գնով

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՐՈՐԾ

286, 77-էվինիւս Նիւ Լորք

267 և 277 Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

FACTS

ABOUT

ARMENIA

ԻՐՈՂՈՒԹԻՒՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Այս է անունն անգլիերէն տետրակին
որ Հ. Հ. Դաշնակցութեան կողմէն հրատա-
րակուեցաւ:

Տետրակն կը պարունակէ Կլատիֆոնի
մեծ ճառն խօսեցեալ ի Զէսթըր, և Տիլոնի
յօդուածն՝ Քօնթէմփորէրի Րիվիւէն ար-
տատարուած: Այս յօդուած մինչև ցարդ
Հայոց վերայ գրուածներուն ամենազօրա-
ւորն և ամենակատարեալն է, զոր կարդա-
ցող օտարական մի, որքան ալ գուլ խղճի
տէր լինի կը կատարի թուրք հառաժարու-
թեան դէմ: Հայրենի կիցք պէտք է փու-
թան տարածել այս տետրակ օտարակա-
նաց մէջ:

Գին օրինակին է 20 սէնթ: Առ նուա-
զն 50 օրինակ մէկէն գնողին կը տրուի
15 սէնթէն:

Դիմել ՀԱՅՔԻ խմբագրատուն:

ԿԻՒ ԵՈՐՔ

ニト 〆 ニト 〆 〆

անունն է Ուսարի Ֆրանթ փողոցին մէջ
գտնուող Թիւ 14 վաճառատանն ,
ուր կը վաճառուին գլխարկ , գլխանոց ,
ձեռնոց , շապիկ , օձիկ , փօշկապ ,
ամենն ալ

ԱՄԵՆԱԱԺԱՆ ԳՆԵՐՈՎ

Հայ գաղթականութեան պէտքերուն
համապատասխանող իւանութիւն է ասի
ինչպէս արդէն շատերն փորձով տեսած
են :

MORRISON & Co.,

ԴԵՐԶԵՆ

106 Fulton St., New York.

Ամառուան համար քննորի ձեռք մի
ղեցստ, ձեր վերայ յատկապէս ձեռած
չափուած կը շինեմք 16 տուարի, իսկ սո-
նազգեստ (փանթոն) 4 տուարի: Ձեռին
կատարելութիւնն ուճշղ ութիւնն կերպ-
սաւորենք:

ՄԵՐ ՉԵՐԵՆ

ՄԱՐԶԱՐԱՆՆ 117 երեսէ բաղկացած աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Գասպարեանի գրչէն, տպեալ Նիւ Եորք, Մ. Գ. ի տպարանում, 1892ին: Առաջին մասին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ է և 36 ձևերէ կամ պատկերներէ, կ'ուսուցանէ թէ զինուորն ինչպէս պէտք է կայնի, բարեւէ, քալէ, վազէ, շրջան անէ, սուին, հրացան բռնէ ու գործածէ, կրակէ անհատաբար, շարքով, ծնրադրութեամբ, գետնամած ևն. ևն.: Երկրորդ մասում կ'աւանդէ «ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵՆԼԻՔ ՄԱՐՏԱ-ԳԻՏԱԿԱՆՔ»: Այս գիրքն կարդալ և ըստ ա՛նմ իրենք զիրենք մարզել պարտին երիտասարդք: Գին 50 սէնթ:

(Այս գրքերն գնելու համար գրել կամ
դիմել Հայքի խմբագրատունն.)

VERTEUS

ԱՏԵՆԱԴՐՈՄՈՒԹԵԱՆ

Իւր տեսակին մէջ առաջինն ու միակն է ի հայերէն գրականութեան: Ի պէտս վարժարանաց յօրինուած է, և կուսուցանէ կարգալու և ճառախօսելու արուեստն արուեստ գեղեցիկ և դժուարին, որոյ հիմնական կարեւորութիւնն դեռ բաւական զգալի եղած չէ առ մեզ: Բսան և մէկ դասերու մէջ ամփոփուած են կանոնք և բացատրուած են օրինակօք հետեւեալ հանգամանք ճառախօսութեան.— ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ՁԱՅՆ, ՇՆԱՍՈՒԹԻՒՅԻՆ, ՊՆԴՈՒՄՆ, ՈՂՈՐՄՈՒՆԻՔ, ՍԱՀՈՒՄՆ, ՁԱՅՆԻ ԱՍՏԻՃԱՆԻՔ, ՁԱՅՆԻ ՉՕՐՈՒԹԻՒՆՆ, ՁԱՅՆԻ ՈՐԱԿՆԵՐՆ, ԱՐԱԳՈՒԹԻՒՆ, ՀԱՐՑ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ և ՇԱՐՔ, և ատենախօսութեան պէսպէս ՁԱՐԺՄՈՒՆԻՔ ներկայացուած են 16 պատկերօք:

Գինն է 200 կէս ֆրանք կամ 1 լուպլի
(50 սէնթ) Ութածայ 120 երես : 1891

ԱԶԳԱՅԻՆ

ՔԵՂ ԵՎ ԲԵԿԵՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ

Այս երկ կը ջանայ պարզել թէ Հայ-
կական խնդիրն այլ ևս կենաց և ընչից ա-
պահովութեան խնդիր չէ, այլ Հայ ազ-
գին իւր պատմական հայրենեաց մէջ վե-
րածնութեան կամ կորստեան խնդիրն է :
Հետեապէս հարցն այն չէ թէ կարո՞տ եմք
համակրանաց և պաշտպանութեան, այլ
թէ կարո՞ղ եմք ինքնապաշտպան լինիլ և
վերականգնիլ իրրեւ ազգ : Զերկրաւոր
()ագաւորութիւնն, ինչպէս գերկնաւորն,
բոլորմբ յափշտակեմ : Արտաքին ճշմարիտ
աշակցութեան ընդունակ կը լինիմք մի-
այն երբ զինեալ ալ մեր բարձրացունեմք :
Ոչ թէ բան մ'անելու այլ բան մի լինելու
խնդիրն է երկու խնդրոց մեծագոյնն :

Գինն է 50 սանթիխ (10 սէնթ) 55 երես: 1893

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» 1892, և «ՎԵՐԱ
ԿԱՆԳՆՈՒՄՆ ՀԱՅՈՑ» 1879, Սպառաձ :

ሪ ማ ሁ ጥ ሶ በ ኩ ፎ ኮ ኩ ኒ
 ሺ . ሀ . ጥ ሁ ፍ ሶ ኮ ኩ ሊ ሄ ሁ ኒ